ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 17.11.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/42

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 06.11.2017թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2017/42 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 06.11.2017թ. բողոքով հայտնել է հետևյալը.

Ընկերությունը սույն թվականի հոկտեմբերի 20-ին «Երևանի հ. 181 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) հրավերով նախատեսված ժամկետում և կարգով, թղթային ձևով Ընթացակարգի

գնահատող հանձնաժողովին է ներկայացրել իր հայտը: Հրավերի 1-ին (միակ) չափաբաժնով նախատեսվել է Պատվիրատուի կարիքների համար ձեռք բերել պրոյեկտորներ (Հրավերի պայմանագրի Հավելված №1-ի՝ «Տեխնիկական բնութագիր»):

Սույն թվականի հոկտեմբերի 25-ին ժամը 17:41-ին, «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի քարտուղար Հայկ Ղազարյանի hayk_khazaryan@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեից ստացել է նախապես պաշտոնապես պահանջված 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հանձնաժողովին ներկայացված Հրավերի N 6 հավելվածը և դրան կցվող՝ առաջարկվող ապրանքների անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր) պարունակող N 6.1 հավելվածը:

Ուշադիր ուսումնասիրելով ներկայացված փաստաթղթերը՝ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն սույն թվականի հոկտեմբերի 26-ին՝ ժամը 15:16-ին hayk_khazaryan@mail.ru և 181dproc@mail.ru էլեկտրոնային փոստերի հասցեներով պաշտոնապես՝

- տեղեկացրել է հանձնաժողովի քարտուղար Հ. Ղազարյանին և Պատվիրատուին մասնակցի կողմից ներկայացված N 6.1 հավելվածում առկա բազմաթիվ կոպիտ սխալների և անհամապատասխանությունների մասին՝ հատ-հատ թվարկելով և մատնանշելով դրանք, և

- համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի՝ խնդրել է հանձնաժողովին տրամադրել 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված՝ հրավերի N 6 հավելվածին կցվող N 6.1 հավելվածի արդեն իսկ շտկված փաստաթղթերի ամբողջական սկանավորված պատճենները:

Սույն թվականի հոկտեմբերի 30-ին ժամը 09:55-ին՝ երեք աշխատանքային օր անց, «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն կրկին էլեկտրոնային նամակով դիմել է «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/4» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին hayk_khazaryan@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեով՝ հիշեցնելով տրամադրել մասնակցի կողմից ներկայացված N 6.1 հավելվածի արդեն իսկ շտկված փաստաթղթերի պատճենները:

Նույն օրը՝ հոկտեմբերի 30-ին ժամը 14:40-ին հանձնաժողովի քարտուղար Հ. Ղազարյանն էլեկտրոնային նամակով հավաստիացրել է, որ «...հանձնաժողովը իր

գործողությունները իրականացնում է Գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ օրենսդրությամբ սահմանված ժամկետներից չշեղվելով...» (սույն բողոքին կից ներկայացվել է գնահատող հանձնաժողովի քարտուղար Հ. Ղազարյանի և «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի միջև էլեկտրոնային փոստով 25.10-30.10.2017թ. էլեկտրոնային նամակագրության պատճենը):

Սույն թվականի հոկտեմբերի 31-ին ժամը 15:25-ին հանձնաժողովի քարտուղար Հ. Ղազարյանից hayk_khazaryan@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեից «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն ստացել է պահանջված փաստաթղթերի արդեն իսկ «շտկված» պատճենն, այս անգամ արդեն ստորագրման ամսաթվերը նշված՝ 30.10.2017թ. (կից՝ հանձնաժողովից 31.10.2017թ. PDF ձևաչափով ստացված՝ «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված N 6.1 հավելվածի նոր՝ շտկված պատճենը):

Մասնակցի կողմից 30.10.2017թ. ներկայացված փաստաթղթերի՝ այսպես կոչված «շտկված» տարբերակը, ինչպես և նախորդը, նույնպես պարունակում էր բազմաթիվ կոպիտ սխալներ և անհամապատասխանություններ Ընթացակարգի հրավերի պահանջների նկատմամբ:

Նույն օրը՝ սույն թվականի հոկտեմբերի 31-ին ժամը 17:23-ին՝ ընդամենը 2 (երկու) ժամ անց, «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն hayk_khazaryan@mail.ru և 181dproc@mail.ru էլեկտրոնային փոստերի հասցեներով պաշտոնապես տեղեկացրել է հանձնաժողովի քարտուղար Հ. Ղազարյանին և Պատվիրատուին այն մասին, որ փաստաթղթերի նախնական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ինչպես և Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի նախորդ տարբերակը, ներկա փաստաթղթերը նույնպես պարունակում են բազմաթիվ կոպիտ սխալներ և անհամապատասխանություններ Հրավերի պահանջների նկատմամբ և մանրամասն տեղեկություններն այդ մասին, պաշտոնական ապացույցների հետ մեկտեղ, նույնպես պաշտոնապես կներկայացվեն հանձնաժողովների ուշադրությանն առաջիկա մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

Հաջորդ օրը՝ սույն թվականի նոյեմբերի 01-ին ժամը 16:44-ին, «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն hayk_khazaryan@mail.ru և 181dproc@mail.ru էլեկտրոնային փոստերի հասցեներով պաշտոնապես կրկին տեղեկացրել է հանձնաժողովի քարտուղար Հ. Ղազարյանին և Պատվիրատուին, որ 1-ին տեղը զբաղեցրած մասնակից «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ի

(այսուհետ նաև՝ Մասնակից) կողմից ներկայացված N 6.1 հավելվածի՝ «շտկած» տարբերակում այս անգամ էլ առկա են բազմաթիվ կոպիտ սխալներ և անհամապատասխանություններ Հրավերի պահանջների նկատմամբ՝ թվարկելով և մանրամասն բացատրելով այդ սխալներն ու անհամապատասխանությունները 2 (երկու) էջից բաղկացած նամակում (բողոքին կից ներկայացվել է գնահատող հանձնաժողովի քարտուղար Հ. Ղազարյանի և «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ միջև էլեկտրոնային փոստով 31.10-01.11.2017թ. էլեկտրոնային նամակագրության պատճենը):

Սակայն նույն օրը՝ սույն թվականի նոյեմբերի 1-ին «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն հայտնաբերել է, որ վերը նշված էլեկտրոնային նամակը հանձնաժողովին ուղարկելուց ընդամենը 39 րոպե առաջ՝ www.gnumner.am կայքում 2017-11-01 16:05:38 արդեն իսկ հրապարակվել է «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/4» ծածկագրով գնման ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, որը նույնիսկ ոչ մի ամսաթիվ և համար չի պարունակում:

Անհասկանալի է և անբացատրելի, թե ինչու՞ գնահատող հանձնաժողովը՝

- ուշադիր ուսումնասիրել է իրեն և Պատվիրատուին «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից սույն թվականի հոկտեմբերի 26-ին ներկայացված խախտումների ցանկն և առանց որևիցե առարկության պահանջել է «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ից ներկայացնել N 6.1 հավելվածի «շտկված» տարբերակը.

- սակայն լիովին անտեսել ու արհամարհել է սույն թվականի հոկտեմբերի 31-ին ժամը 17:23-ին՝ hayk_khazaryan@mail.ru և 181dproc@mail.ru էլեկտրոնային փոստերի հասցեներով հանձնաժողովի քարտուղար Հ. Ղազարյանին և Պատվիրատուին պաշտոնապես ուղարկված «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի նամակն այն մասին, որ «Փաստաթղթերի նախնական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ինչպես և Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի նախորդ տարբերակը, ներկա փաստաթղթերը նույնպես պարունակում են բազմաթիվ կոպիտ սխալներ և անհամապատասխանություններ Հրավերների պահանջներին:»

- չի սպասել իրեն «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից սույն թվականի հոկտեմբերի 31-ին պաշտոնապես խոսք տված ուղարկել ոչ ուշ քան սույն թվականի նոյեմբերի 1-ի ընթացքում («Մանրամասն տեղեկություններն այդ մասին, պաշտոնական ապացույցների հետ

մեկտեղ, նույնպես պաշտոնապես կներկայացվեն հանձնաժողովների ուշադրությանն առաջիկա մեկ աշխատանքային օրվա ընթացքում») նամակը, որը պետք է պարունակեր տեղեկություններ բազմաթիվ սխալների և անհամապատասխանությունների մասին Հրավերի պահանջների նկատմամբ և ծածուկ ու շուտափույթ պայմանագիր կնքելու որոշում կայացրել, որի կայացման արձանագրությունն, ի միջի այլոց, երևան չի եկել և 06.11.2017թ. դրությամբ իսպառ բացակայում է www.gnumner.am կայքում:

Իսկ միգուցե՞ հանձնաժողովի նպատակն էր, որ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն չիմանա և չհասցնի բողոքարկել այդ շուտափույթ կայացրած և ապօրինի որոշումը:

Ստորև «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն համառոտ ներկայացնում է ՀՀ Գնումների բողոքարկման խորհրդի ուշադրությանը՝ «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/4» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովին ներկայացված և ավելի քան մանրամասն պարզաբանված «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նոր՝ շտկած N 6.1 հավելվածում բազմաթիվ կոպիտ սխալները և անհամապատասխանությունները, որոնց լրիվ բացվածքը շարադրված է սույն բողոքին կից ներկայացված՝ հանձնաժողովի քարտուղար Հ. Ղազարյանի և «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի միջև էլեկտրոնային փոստով 31.10-01.11.2017թ. էլեկտրոնային նամակագրության պատճենում:

1) Հրավերի «Տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույց» Հավելված N 1-ով պարտադիր պահանջվող 5 (հինգ) ապրանքների «Ապրանքային նշանները» նշված են ակնհայտորեն սխալ:

Կրկին, ինչպես և ներկայացված փաստաթղթերի նախորդ տարբերակում, Մասնակիցը պահանջվող տեղեկությունների փոխարեն (Ապրանքային նշաններ՝ Panasonic, 2 անգամ Gembird, Wise, Digis Electra) համառորեն՝ նշում է իր կողմից առաջարկվող ապրանքների (սարքավորումների) մակնիշները (PT-VW540, CC-PPVGA-20M-B, GVS 122, WTH 62110, DSEM-4309)...:

2) Հրավերով թվարկվող և պարտադիր պահանջվող 5 (հինգ) ապրանքների նշված առնվազն 3 (երեք) «Արտադրողների անվանումները» կրկին, ինչպես և ներկայացված փաստաթղթերի նախորդ տարբերակում, նշված են ակնհայտորեն սխալ:

ա) Մասնակցի կողմից որպես արտադրող մատնանշված Panasonic ընկերությունը պարզապես գոյություն չունի՝ խոսքը պետք է գնա հայտնի ճապոնական Panasonic

Corporatioan ընկերության մասին (https:// www. panasonic. Com /global /corporate/ profile/ overview.html, արտատպումը արտադրողի պաշտոնական WEB կայքից կցված է սույն բողոքին):

բ) Մասնակցի կողմից որպես արտադրող մատնանշված Gembird ընկերությունը պարզապես գոյություն չունի՝ խոսքը պետք է գնա հոլանդական Gembird Europe B.V. ընկերության մասին (http://gembird.com/company.aspx?op=history, արտատպումը արտադրողի պաշտոնական WEB կայքից կցված է սույն բողոքին):

գ) Ընկերությանն ուղղակի չհաջողվեց որևիցե կերպ գտնել Մասնակցի կողմից, որպես արտադրող մատնանշված Wise ընկերության մասին որևիցե ստույգ տվյալներ: Արտադրողի թե՛ անգլերեն, թե՛ ռուսերեն լեզուներով հասանելի պաշտոնական WEB կայքերում (http://www.wize-av.com/about/index.php, http://www.wize-av.ru/, արտատպումները արտադրողի պաշտոնական WEB կայքերից կցված են սույն բողոքին) ուղղակի բացակայում է որևիցե տեղեկություն ընկերության մասին:

դ) Ընկերությանն ուղղակի չհաջողվեց որևիցե կերպ գտնել Մասնակցի կողմից որպես արտադրող մատնանշված Digis ընկերությունն՝ ենթադրաբար խոսքը պետք է գնա ռուսական «Группа компаний DIGIS» ընկերությունների խմբի մասին, որն իր կազմում ընդգրկում է 6 (վեց) առանձին և բոլորովին տարբեր բնագավառներում աշխատող ընկերություններ (https://digis.ru/about/, արտատպումը արտադրողի պաշտոնական WEB կայքից կցված է սույն բողոքին) և հարց է առաջանում, թե ո՞րն է նրանցից Մասնակցի ներկայացմամբ Digis Electra DSEM-4309 պրոյեկցիոն էկրանի արտադրողը:

3) Հրավերով պարտադիր պահանջվող և աղյուսակում նշված 5 (հինգ) ապրանքներից միայն 3 (երեք) «Ծագման երկիր» տվյալները՝ Չինաստան (մալուխ CC-PPVGA-20M-B, ուժեղացուցիչ-բախշիչ GVS 122, կախիչ WTH 62110) համապատասխանում են իրականությանը:

ա) Ինչ վերաբերում է Panasonic PT-VW540 սարքավորման համար որպես «Ծագման երկիր» մատնանշված Ճապոնիային, ապա դա չի համապատասխանում իրականությանը՝ տվյալ պրոյեկտորը միանշանակ արտադրվում է Չինաստանում, ի ապացույց ինչի կից ներկայացվել է Panasonic ընկերության առ 27.10.2017թ. պաշտոնական նամակը հարցի վերաբերյալ:

Բացի այդ, Ընկերությունը հայտնել է նաև, որ Panasonic PT-VW540 պրոյեկտորների առաջին մատակարարումը ՀՀ սպասվում է մոտակա 2 շաբաթվա ընթացքում, և «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն հարկ եղած դեպքում կարող է ներկայացնել սարքավորումը ՀՀ Գնումների բողոքարկման խորհրդին:

բ) Ինչ վերաբերում է Digis Electra DSEM-4309 պրոյեկցիոն էկրանի համար որպես «Ծագման երկիր» մատնանշված Ռուսաստանին, ապա դա ինքնին արդեն իսկ չի համապատասխանում իրականությանը:

Փաստն այն է, որ նույնիսկ «Группа компаний DIGIS» ընկերությունների խմբի պաշտոնական WEB կայքում հասանելի (https://digis.ru/upload/iblock/e6e/Electra.pdf, արտատպումը արտադրողի պաշտոնական WEB կայքից կցված է սույն բողոքին) և Մասնակցի կողմից առաջարկված Electra սերիայի DSEM-4309 պրոյեկցիոն էկրանի «Օգտվողի հրահանգում» («Инструкция» - կցված է սույն բողոքին) հենց առաջին էջի վրա սևով սպիտակի վրա գրված է՝ «Արտադրված է Չինաստանում» («Сделано в Китае»):

4) № 6.1 հավելվածում Հրավերով պարտադիր պահանջվող և աղյուսակում ներկայացված ուժեղացուցիչ-բաշխիչ Gembird GVS 122 (http://gembird.com/item.aspx?id=2782, http://www.gmb-online. NI / egmb/ ProductSheet. aspx?id=2782&lang=1,http://gembird.nl/Repository/CommonFiles/cf_website_image---0efb1374-4d53-4cc7-8489-55b18f960187.pdf, արտատպումը արտադրողի պաշտոնական WEB կայքից կցված է սույն բողոքին) հաճախականության դիապազոնը՝ 200 MHz ուղղակի չի համապատասխանում Հրավերի «Տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույց» Հավելված N 1-ով հստակ ամրագրված մինիմալ պահանջին՝ 450 MHz:

Բացի այդ, տվյալ սարքը ստանում է առանձին սնուցում առանձին սարք հանդիսացող 7V DC 500 mA հոսանքի ադապտերի միջոցով, մինչդեռ հրավերով հստակ պահանջվում է սնուցումը ապահովել USB Y-Cable մալուխի միջոցով:

Վերը նշված տվյալներն առկա են Gembird GVS 122 սարքի պաշտոնական տեղեկատվական բրոշուրներում, որոնք կցված են սույն բողոքին:

5) Հրավերով պարտադիր պահանջվող և աղյուսակում ներկայացված Wise WTH 62110 կախիչի տեխնիկական բնութագրերը պարզապես չեն համապատասխանում Հրավերի «Տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույց» Հավելված N 1-ով հստակ

ամրագրված պահանջին. Ceiling mount (Առաստաղին ամրացվող կախիչ), մինչդեռ Մասնակցի կողմից առաջարկվում է տվյալ կոնկրետ նախագծին լիովին չհամապատասխանող Wall Mount for Short-Throw Projector/ Универсальное настенное крепление для короткофокусного проектора / Պատին ամրացվող կախիչ կարճաֆոկուս պրոյեկտորի համար:

Պաշտոնական տեղեկատվությունը վերոգրյալի մասին հասանելի է հենց արտադրողի պաշտոնական WEB կայքում՝ http://www.wize-av.ru/catalog/wize/wize_from_projectors/wize-wth62110/, http://www.wize-av.ru/upload/iblock/2fb/manual_WTH62110.pdf, արտատպումը արտադրողի պաշտոնական WEB կայքից կցված է սույն բողոքին:

6) Հրավերի «Տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույց» Հավելված N 1-ով պարտադիր պահանջվող Panasonic պրոյեկտորի երաշխիքային սպասարկման ժամկետը (Warranty for parts and labor - 30 months; - Warranty for the built-in lamp 12 months or 1,000 hrs, whichever comes first) պարզապես բացակայում է «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված N 6.1 հավելվածի «շտկած» տարբերակում:

7) Հրավերի «Տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույց» Հավելված N 1-ով պարտադիր պահանջվող ծառայությունը՝ «Համակարգը պետք է մատակարարվի և տեղադրվի (ներառյալ տեղադրման համար անհրաժեշտ պարագաները և նյութերը) Վաճառողի ուժերով և նրա միջոցների հաշվին» պարզապես նույնպես բացակայում է «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված N 6.1 հավելվածի «շտկած» տարբերակում:

Ելնելով վերը նշված բոլոր փաստերից՝ Ընկերությունը գտնում է, որ Պատվիրատուն դիտավորյալ, ուղղակիորեն և կոպիտ խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի՝

- 5-րդ մասի 2-րդ կետը, այն է՝ «...հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը...»

- 6-րդ մասը, այն է՝ «...հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված...»:

Վերը նշվածից միանշանակ և ակնհայտ երևում է, որ խախտվել են և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությունն, այն է՝ «... մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքային նշանն, արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր)...»:

- 46-րդ կետը, այն է՝ «...հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները...».

- 47-րդ կետը, այն է՝ «...առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ... սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը...»:

- 48-րդ կետի 2-րդ ենթակետն, այն է՝ «... Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում

հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին...»:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Ընկերությունը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է անվավեր ճանաչել «Երևանի հ. 181 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/4» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կայացրած՝ «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչելու և վերջինիս հետ պայմանագիր կնքելու մասին որոշումները:

Խորհրդին ուղղված 13.11.2017թ. թիվ 1/10-11/13-01 գրությամբ Ընկերությունը «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի դիրքորոշման մասին հայտնել է, որ

1) Անհասկանալի է, թե ելնելով ո՞ր իրավական ակտի ո՞ր կետից, այն դեպքում, երբ բողոքարկվում են հենց գնահատող հանձնաժողովի գործողությունները, գնահատող հանձնաժողովի անունից դիրքորոշում է ներկայացնում Պատվիրատուի տնօրենն, այլ ոչ թե հանձնաժողովի նախագահը և քարտուղարը:

2) Բոլորովին անհասկանալի է, թե ինչո՞ւ պաշտոնապես հայտարարելով, որ «Հանձնաժողովի կողմից ուսումնասիրություններն իրականացվել են կայքերի միջոցով և այդ կայքերում առկա տեղեկատվության հիման վրա»՝ գնահատող հանձնաժողովը բացարձակապես չի ներկայացրել նույնիսկ մեկ հատ այդպիսի WEB կայքի հասցե և ի ապացույց իր դիրքորոշմանը չի ներկայացրել ՀՀ Գնումների բողոքարկման խորհուրդ թեկուզ մեկ թերթ արտատպում որևիցե արտադրողի որևիցե պաշտոնական WEB կայքից:

Նման դիրքորոշումն ավելի քան անհասկանալի է և անբացատրելի այն պարագայում, երբ գնահատող հանձնաժողովի դիրքորոշումն ուղղված է հենց ընդդեմ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի բողոքի, որը պարունակում է բազմաթիվ կոնկրետ ապացույցներ՝ արտատպումներ կոնկրետ արտադրողներին սեփականության իրավունքով պատկանող պաշտոնական WEB կայքերից և կոնկրետ հղումներ այդ կոնկրետ WEB կայքերին:

3) Գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված դիրքորոշումը՝

ա) Բացարձակապես չի պարունակում որևիցե պարզաբանում, թե ինչու՞ գնահատող հանձնաժողովը՝

- ուշադիր ուսումնասիրել է իրեն և Պատվիրատուին «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից սույն թվականի հոկտեմբերի 26-ին ներկայացված խախտումների ցանկն և առանց որևիցե առարկության պահանջել է «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ից ներկայացնել N 6.1 հավելվածի «շտկած» տարբերակն, ինչը հաստատվում է հենց նշված դիրքորոշման առաջին իսկ նախադասությամբ.

- սակայն լիովին անտեսել ու արհամարհել է սույն թվականի հոկտեմբերի 31-ին ժամը 17:23-ին hayk_khazaryan@mail.ru և 181dproc@mail.ru էլեկտրոնային փոստերի հասցեներով հանձնաժողովի քարտուղար Հ. Ղազարյանին և Պատվիրատուին պաշտոնապես ուղարկված «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի նամակն այն մասին, որ «Փաստաթղթերի նախնական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ինչպես և Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի նախորդ տարբերակը, ներկա փաստաթղթերը նույնպես պարունակում են բազմաթիվ կոպիտ սխալներ և անհամապատասխանություններ Հրավերի պահանջներին:»

- չի սպասել իրեն «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից սույն թվականի հոկտեմբերի 31-ին պաշտոնապես խոսք տված մինչև սույն թվականի նոյեմբերի 1-ն ուղարկվելիք նամակին, որը պետք է պարունակեր տեղեկություններ Հրավերի պահանջների բազմաթիվ սխալների և անհամապատասխանությունների մասին և ծածուկ ու շուտափույթ պայմանագիր կնքելու որոշում կայացրել, որի կայացման արձանագրությունն, ի միջի այլոց, երևան չի եկել և 13.11.2017թ. դրությամբ. իսպառ բացակայում է www.gnumner.am կայքում:

բ) Բացարձակապես չի պարունակում թեկուզ մեկ կոնկրետ հերքում, կամ ընդդեմ ապացույց, կամ բացատրություն «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի բողոքում թվարկված՝ Ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած Մասնակցի կողմից ներկայացված N 6.1 հավելվածի «շտկած» տարբերակում առկա բազմաթիվ կոպիտ սխալների և անհամապատասխանությունների վերաբերյալ:

Այսպիսով, գնահատող հանձնաժողովի կողմից բացարձակապես չի հերքվել, որ Հրավերի «Տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույց» Հավելված N 6.1-ով պարտադիր պահանջվող՝

- 5 (հինգ) ապրանքների «Ապրանքային նշանները» նշված են ակնհայտորեն սխալ:

- 5 (հինգ) ապրանքներից առնվազն 3 (երեքի) «Արտադրողների անվանումները» նշված են ակնհայտորեն սխալ:
- 5 (հինգ) ապրանքներից 2 (երկուսի) «Ծագման երկիրը» նշված է ակնհայտորեն սխալ:
- Gembird GVS 122 ուժեղացուցիչ-բաշխիչն իր տեխնիկական բնութագրերով՝ 200 MHz հաճախականության դիապազոն և սնուցում առանձին սարք հանդիսացող 7V DC 500 mA հոսանքի ադապտերի միջոցով ուղղակի չի համապատասխանում հրավերում հստակ ամրագրված մինիմալ պահանջներին՝ 450 MHz և սնուցում USB Y-Cable մալուխի միջոցով:
- Wise WTH 62110 պատին ամրացվող կախիչ կարճաֆոկուս պրոյեկտորի համար (Wall Mount for Short-Throw Projector/ Универсальное настенное крепление для короткофокусного проектора) ուղղակի չի համապատասխանում հրավերում հստակ ամրագրված մինիմալ պահանջներին՝ առաստաղին ամրացվող կախիչ (Ceiling mount):
- Հրավերում հստակ ամրագրված Panasonic պրոյեկտորի երաշխիքային սպասարկման ժամկետը (Warranty for parts and labor - 30 months; - Warranty for the built-in lamp 12 months or 1,000 hrs, whichever comes first) պարզապես բացակայում է:
- Հրավերում հստակ ամրագրված «Համակարգը պետք է մատակարարվի և տեղադրվի (ներառյալ տեղադրման համար անհրաժեշտ պարագաները և նյութերը) Վաճառողի ուժերով և նրա միջոցների հաշվին» ծառայությունը՝ նույնպես պարզապես բացակայում է:

Որպես Panasonic Corp. (Professional Displays Division) ընկերության միակ պաշտոնական դիստրիբյուտոր և սերվիս կենտրոն ՀՀ-ում՝ Ընկերությունը պաշտոնապես տեղեկացրել է, որ Ճապոնիայում գտնվող ընկերության գործարանում արտադրվում են միայն, այսպես կոչված, «ծանր» դասի՝ ինստալյացիոն պրոյեկտորներն, իսկ բոլոր այլ մոդելները, ներառյալ, այսպես կոչված, օֆիսային դասի սարքերն, որոնց թվին են պատկանում նաև Panasonic PT-VW540 մակնիշի պրոյեկտորներն, արտադրվում են Չինաստանում:

Ընկերությունը գրությանը կից ներկայացրել է ՀՀ տարածք առաջին անգամ սույն թվականի նոյեմբերի 10-ին ներմուծված Panasonic PT-VW540 պրոյեկտորի սարքի և

տուփի լուսանկարները, որտեղից պարզ երևում է, որ սարքի «Ծագման երկիր» է հանդիսանում հենց Չինաստանն, իսկ PT-VW540 նշանակում է ոչ թե «Ապրանքային նշան», ինչպես պնդում են «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ն և գնահատող հանձնաժողովն, այլ ընդամենը ապրանքի (սարքավորման) մակնիշ:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն պատկերացում չունի, թե ինչ աշնանային արձակուրդների մասին է խոսքը գնում նշված դիրքորոշման մեջ, քանի որ N 1/10-11/06-01 բողոքում տվյալ հանգամանքի վերաբերյալ բացարձակապես բացակայում է որևիցե նշում:

Ընկերությունը ՀՀ Գնումների բողոքարկման խորհրդի ուշադրությունը հրավիրել է նաև հետևյալի վրա.

- համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի, ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի և ՀՀ Ֆինանսների նախարարի 2017թ. մայիսի 25-ի N250-Ա հրամանի՝ «Գնանշման հարցման ձևով թղթային եղանակով կազմակերպվող անշարժ գույքի և գնումների բազային միավորի հնգապատիկը չգերազանցող գնման հայտարարությունների և հրավերների օրինակելի ձևերը հաստատելու մասին» N 6.1 հավելվածում բերված աղյուսակի յուրաքանչյուր սյունակում պարունակվող տեղեկությունները լիովին և անվիճելի իրավահավասար են:

- նշված իրավական ակտերը բացարձակապես չեն սահմանում և չեն պարունակում որևիցե աստիճանավորում կամ որևիցե այլ տեսակ դասակարգում «Ապրանքային նշանը», «Արտադրողի անվանումը», «Ծագման երկիրը» կամ «Տեխնիկական բնութագրերը» N 6.1 հավելվածի սյունակներում պարունակվող տեղեկությունների կարևորության մեջ.

- նշված իրավական ակտերը բացարձակապես չեն սահմանում և չեն պարունակում N 6.1 հավելվածի սյունակներում պարունակվող մեկ այլ տեսակի տվյալների առավելությունը մյուս տվյալների նկատմամբ.

- եթե գոյություն ունենար որևիցե աստիճանավորում կամ որևիցե այլ տեսակ դասակարգում N 6.1 հավելվածում բերված աղյուսակի յուրաքանչյուր սյունակում պարունակվող տեղեկությունների միջև, ապա դա պարտադիր և առանձին կնշվեր վերը թվարկված օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերում:

Եթե թեկուզ մեկ տվյալ, որը վերաբերում է, օրինակի համար՝ մատակարարվող ապրանքի ծագման երկրին կամ արտադրողի անվանմանը, մասնակցի կողմից սխալ է նշված, ապա, համաձայն գործող օրենսդրությանը՝ գնահատող հանձնաժողովը պարտավոր է մերժել մասնակցի հայտը:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն պատրաստ է պաշտպանել այս դիրքորոշումն ընդհուպ մինչև բոլոր երեք ատյանների դատարաններում:

Ուստի, ղեկավարվելով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 06.11.2017թ. ՀՀ Գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքում թվարկված իրավական հիմքերով՝ Ընկերությունը կրկին պահանջել է անվավեր ճանաչել «Երևանի հ. 181 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/4» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կայացրած՝ «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին որոշումները:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 10.11.2017թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. <u>«Երևանի հ. 181 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

«Երևանի հ. 181 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը Խորհրդին ուղղված 08.11.2017թ. գրությամբ հայտնել է, որ «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/4» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովն ուսումնասիրել է «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի 26.10.2017թ. ներկայացված խախտումների ցանկը և առաջարկել «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում վերանայել իր կողմից ներկայացված փաստաթղթերը: «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ի կողմից անհամապատասխանությունները շտկվել են սահմանված ժամկետում:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրություններն իրականացվել են կայքերի միջոցով և այդ կայքերում առկա տեղեկատվության հիման վրա, ինչից ելնելով, հանձնաժողովը «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ի հայտը գնահատել է բավարար և նրան ճանաչել ընտրված մասնակից:

Անդրադառնալով պայմանագիր կնքելու մասին որոշման՝ Պատվիրատուն նշել է, որ հրապարակումն իրականացվել է արդյունքների գնահատման նիստի հաջորդ օրը, այսինքն՝ սահմանված ժամկետում:

Ինչ վերաբերում է «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված այն տեղեկատվությանը, որ հանձնաժողովի անդամներն այդ ժամանակահատվածում գտնվել են աշնանային արձակուրդում, ապա Պատվիրատուն նշել է, որ այն չի համապատասխանում իրականությանը:

Ելնելով վերոգրյալից՝ Պատվիրատուն հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կայացրած ոչ մի որոշում չի հակասում գնումների մասին ՀՀ օրենսդրությանը, հանձնաժողովի գործողությունները չեն հանգեցրել որևէ մասնակցի իրավունքների խախտմանը, չեն եղել խտրական և չեն սահմանափակել մրցակցությունը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 10.11.2017թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերը նշված դիրքորոշումը:

3. ԳԲԽ-ԱՄ-2017/42 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2017/42 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Երևանի հ. 181 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից «Երևանի հ. 181 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար էկրանով պրոյեկտորի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել նաև «Ֆիրմա Ալֆա» և «Իայսիտելեկոմ» ՍՊ ընկերությունները:

2. Ընթացակարգի հրավերով նախատեսվել է գնման առարկա պրոյեկտորի տեխնիկական բնութագրի հետևյալ բնութագիրը.

№	նկարագիրը	քան

		ակը
1	Digital Projector Panasonic PT-VW530 -3 LCD technology; - Brightness'- **5,000** ANSI Lumens ; - Native **WXGA** (**1,280** x **800** pixels / total **1,024,000** pixels) / compressed **WUXGA** (1,920 x 1,200 pixels / total 2,304,000 pixels) resolution; - Aspect Ratio Native / Supported – **16:10** /16 :9, 4:3 - Lamp life – **5,000 / 7,000** hours (Normal / Eco mode); - Contrast - **10,000:1;** - **Keystone Correction** - Vertical ±35; Horizontal ±35°; -4 Corner **Keystone Correction** **-Daylight View Basic** function – uses a sensor to measure ambient light, optimizing brightness, color, and contrast for vividly punchy images in bright rooms; - Projection onto **Curved Surfaces** - natural, distortion-free images onto **curved** or **cylindrical** surfaces (such as sculpted corporate reception walls, large pillars, etc.); -Screen Size (diagonal) - **30" - 300"** (0.76 - 7.62 m) - Flexible **1.6x** Manual Zoom Lens; - *Distortion-Free* **Vertical Lens Shift;** - **Daylight View Basic** function – uses a sensor to measure ambient light, optimizing brightness, color, and contrast for vividly punchy images in bright rooms; - **Digital Link** function - using HDBaseT™ technology, the DIGITAL LINK connection routes uncompressed Full HD video and Ethernet/RS-232C control commands through a **single cable** for distances of up to **100 m** (328 ft). - **Direct Power Off** function; - **Auto Input Signal Search** function; - **Color-Board** and Blackboard Modes; - **Input terminals:** HDMI 19-pin x 2 (compatible with HDCP), audio signal: linear PCM (sampling frequencies: 48 kHz, 44.1 kHz, 32 kHz); D-sub HD 15-pin (female) x 1 (RGB/YPBPR/YCBCR/YC x 1); D-sub HD 15-pin (female) x 1 (RGB x 1), (input/output selectable using on-screen menu) ; Pin jack x 1 (Composite VIDEO) ; M3 x 1 (L-R x 1) ; M3 1 (L-R x 1) for audio input or for microphone connection (variable) ; Pin jack x 2 (L, R x 1) ; D-sub 9-pin (female) x 1 for external control (RS-232C compliant) - **Output terminals:** D-sub HD 15-pin (female) x 1 (RGB x 1), (input/output selectable using on-screen menu); M3 x 1 (L-R x 1) for output (variable); - **Communication terminals:** RJ-45 x 1 (for network connection, 10Base-T, 100Base-TX, compliant with PJLink™ -Speaker – 1 x **10W** (mono); - Weight – 4.8 kg - Warranty for parts and labor - 30 months; - Warranty for the built-in lamp 12 months or 1,000 hrs, whichever comes first. *Manufactured by* **Panasonic Corp.** (Japan	1
2	**Equip** RGB Connection cable, 15P D-Sub M./M. **20 m** - *Manufactured by* **DDC GmbH (Germany)**	1
3	**Equip 2-port RGB Amplifier / Splitter 1/2** - Portable, 450 MHZ, max. 55 m, w.o. pin 9, w. DDC, power supply via USB Y-Cable 40 cm, max. Resolution: 2.048 x 1.536, Input: 1x M, Output: 2x F *Manufactured by* ***Digital Data Communications GmbH*** *(Germany)*	1
4	Universal ceiling mount **Standard** (60-110 cm)	1
5	Պրոյեկտորի էկրան, Էլեկտրական շարժիչով, հեռակառավարվող, երկ. և բարձր.՝ 300x400սմ, էկրանը իջեցնելու կամ բարձրացնելու ընթացքում պետք է հնարավոր լինի ֆիքսել էկրանի ցանկացած բարձրություն: DIgis Electra 4;3 2 190՝ MW DSEM 4309	1

*Համակարգը պետք է մատակարարվի և տեղադրվի (ներառյալ տեղադրման համար անհրաժեշտ պարագաները և նյութերը) Վաճառողի ուժերով և նրա միջոցների հաշվին,
** Տեխնիկական բնութագրում ֆիրմային նշանին, արտադրողին և ծագման երկրին կատարված հղումների հետ միասին հասկանալ կամ համարժեք բառերը:
*** Ապրանքները պետք է լինեն չօգտագործված:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.10.2017թ. ժամը 12:30-ի նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով կայացված որոշմամբ «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ն ճանաչվել է Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.10.2017թ. ժամը 12:30-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել են անհամապատասխանություններ «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում և մասնակցին ծանուցվել է անհամապատասխանությունները սահմանված ժամկետում շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.10.2017թ. ժամը 12:30-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրի շտկված տարբերակը գնահատվել է բավարար և մասնակիցը ճանաչվել է ընտրված:

6. 01.11.2017թ. www.procurement.am ինտերնետային կայքում հրապարակվել է «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/4» գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու մասին հայտարարություն և սահմանվել է պայմանագիր կնքելու անգործության ժամկետ:

7. www.procurement.am ինտերնետային կայքում առկա տեղեկատվության համաձայն՝ «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման նիստի արձանագրությունը տեղեկագրում հրապարակվել է 14.11.2017թ.:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի 06.11.2017թ. բողոքը, «Երևանի հ. 181 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 08.11.2017թ. գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի համաձայն՝

5. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

6. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

Նույն հոդվածի 9-րդ մասի 1-ին պարբերության համաձայն՝ հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է

ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքային նշանն արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Նույն կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 48-րդ կետը սահմանում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«Երևանի հ. 181 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար էկրանով պրոյեկտորի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի հրավերով գնման առարկա պրոյեկտորի համար նախատեսվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

№	նկարագիրը	քանակը
1	Digital Projector Panasonic PT-VW530 -3 LCD technology; - Brightness`- **5,000** ANSI Lumens ; - Native **WXGA** (**1,280** x **800** pixels / total **1,024,000** pixels) / compressed **WUXGA** (1,920 x 1,200 pixels / total 2,304,000 pixels) resolution; - Aspect Ratio Native / Supported – **16:10** /16 :9, 4:3 - Lamp life – **5,000 / 7,000** hours (Normal / Eco mode); - Contrast - **10,000:1;** - **Keystone Correction** - Vertical ±35; Horizontal ±35°; -4 Corner **Keystone Correction** -**Daylight View Basic** function – uses a sensor to measure ambient light, optimizing brightness, color, and contrast for vividly punchy images in bright rooms; - Projection onto **Curved Surfaces** - natural, distortion-free images onto **curved** or **cylindrical** surfaces (such as sculpted corporate reception walls, large pillars, etc.); -Screen Size (diagonal) - **30" - 300"** (0.76 - 7.62 m) - Flexible **1.6x** Manual Zoom Lens; - *Distortion-Free* **Vertical Lens Shift;** - **Daylight View Basic** function – uses a sensor to measure ambient light, optimizing brightness, color, and contrast for vividly punchy images in bright rooms; - **Digital Link** function - using HDBaseT™ technology, the DIGITAL LINK connection routes uncompressed Full HD video and Ethernet/RS-232C control commands through a **single cable** for distances of up to **100 m** (328 ft). - **Direct Power Off** function; - **Auto Input Signal Search** function; - **Color-Board** and Blackboard Modes; - **Input terminals:** HDMI 19-pin x 2 (compatible with HDCP), audio signal: linear PCM (sampling frequencies: 48 kHz, 44.1 kHz, 32 kHz); D-sub HD 15-pin (female) x 1 (RGB/YPBPR/YCBCR/YC x 1); D-sub HD 15-pin (female) x 1 (RGB x 1), (input/output selectable using on-screen menu) ; Pin jack x 1 (Composite VIDEO) ; M3 x 1 (L-R x 1) ; M3 1 (L-R x 1) for audio input or for microphone connection (variable) ; Pin jack x 2 (L, R x 1) ; D-sub 9-pin (female) x 1 for external control (RS-232C compliant)	1

	- **Output terminals:** D-sub HD 15-pin (female) x 1 (RGB x 1), (input/output selectable using on-screen menu); M3 x 1 (L-R x 1) for output (variable); - **Communication terminals:** RJ-45 x 1 (for network connection, 10Base-T, 100Base-TX, compliant with PJLink™ -Speaker – 1 x **10W** (mono); - Weight – 4.8 kg - Warranty for parts and labor - 30 months; - Warranty for the built-in lamp 12 months or 1,000 hrs, whichever comes first. *Manufactured by* **Panasonic Corp.** (Japan	
2	**Equip** RGB Connection cable, 15P D-Sub M./M. **20 m** - *Manufactured by* **DDC GmbH (Germany)**	1
3	**Equip 2-port RGB Amplifier / Splitter 1/2** - Portable, 450 MHZ, max. 55 m, w.o. pin 9, w. DDC, power supply via USB Y-Cable 40 cm, max. Resolution: 2.048 x 1.536, Input: 1x M, Output: 2x F *Manufactured by* ***Digital Data Communications GmbH*** *(Germany)*	1
4	Universal ceiling mount **Standard** (60-110 cm)	1
5	Պրոյեկտորի էկրան, Էլեկտրական շարժիչով, հեռակառավարվող, երկ. և բարձր.՝ 300x400սմ, էկրանը իջեցնելու կամ բարձրացնելու ընթացքում պետք է հնարավոր լինի ֆիքսել էկրանի ցանկացած բարձրություն: Dlgis Electra 4;3 2 190՝ MW DSEM 4309	1

*Համակարգը պետք է մատակարարվի և տեղադրվի (ներառյալ տեղադրման համար անհրաժեշտ պարագաները և նյութերը) Վաճառողի ուժերով և նրա միջոցների հաշվին,
** Տեխնիկական բնութագրում ֆիրմային նշանին, արտադրողին և ծագման երկրին կատարված հղումների հետ միասին հասկանալ կամ համարժեք բառերը:
*** Ապրանքները պետք է լինեն չօգտագործված:

Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ն հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Նույն հայտարարությամբ Մասնակիցը պարտավորվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/4» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի 3-րդ կետի 3.1-րդ ենթակետով սահմանվել է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.10.2017թ. ժամը 12:30-ի նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով կայացված որոշմամբ «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ն ճանաչվել է Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.10.2017թ. ժամը 12:30-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես.

- Թիվ 6.1 հավելվածում թվարկվող և հրավերի Հավելված 1-ով պարտադիր պահանջվող, տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում նշված 5 ապրանքների անվանումներից նշված են միայն 2-ը, մնացածի վերաբերյալ որևէ տեղեկատվություն արտացոլված չէ.
- Թիվ 6.1 հավելվածում հրավերում թվարկվող և պահանջվող 5 ապրանքներից նշված են միայն 2-ի ապրանքային նշաններն, այն էլ՝ թերություններով.
- Թիվ 6.1 հավելվածում հրավերում թվարկվող և պահանջվող 5 ապրանքներից նշված է միայն 2-ի արտադրողի անվանումները, այն էլ՝ թերություններով.
- Թիվ 6.1 հավելվածում հրավերում թվարկվող և պահանջվող 5 ապրանքներից աղյուսակում նշված են միայն երեքի ծագման երկրները՝ Ճապոնիա, Չինաստան և Ռուսաստան, այն էլ՝ նախորդող սյունակներում նշված երկու սարքավորման համար, որի հետևանքով անհասկանալի է դառնում, թե վերջինս որ ապրանքներին է վերաբերում.
- Թիվ 6.1 հավելվածում բացակայում է պրոյեկտորի կախոցի տեխնիկական բնութագիրը, մակնիշը, ծագման երկիրը, արտադրողի անվանումը.

• Թիվ 6.1 հավելվածում բացակայում է հրավերով պահանջվող Equip 2-port RGB Amplifer/ Splitter ½ ուժեղացուցիչ-բաշխիչը և այս սարքի համապատասխանող բոլոր անհրաժեշտ տեղեկատվությունները, ներկայացված «PT-VZ580E» մակնիշի պրոյեկտորի սեղանային շեղումների շտկման ցուցանիշները չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, այն է՝ ուղղահայաց (Vertical) +/-35°, հորիզոնական (Horizontal) +/-35° ցուցանիշների փոխարեն առաջարկվում է ուղղահայաց (Vertical) +/-25°, հորիզոնական (Horizontal) +/-30°:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն Մասնակցին առաջարկել է մեկ աշխատանքային օրյա ժամկետում շտկել անհամապատասխանությունը:

«Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացվել է տեխնիկական բնութագրի շտկված տարբերակը (Հավելված 6.1) հետևյալ տեսքով.

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	ծագման երկիրը	տեխնիկական բնութագրերը
1	Պրոյեկտոր	1/PT-VW540 2/CC-PPVGA-20M-B 3/GVS 122 4/WTH 62110 5/ DSEM-4309	1/Panasonic 2/Gembird 3/ Gembird 4/Wize 5/Digis	1/Ճապոնիա 2/Չինաստան 3/Չինաստան 4/Չինաստան 5/ՌԴ	

Այսպես՝ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությունը սահմանում է, որ ապրանքային նշանը նիշ է, որն օգտագործվում է մեկ անձի ապրանքները և (կամ) ծառայություններն այլ անձի ապրանքներից և (կամ) ծառայություններից տարբերելու համար:

Խորհուրդն արձանագրում է, որ «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 6.1-ի «ապրանքային նշանը» սյունակում նշված PT-VW540, CC-PPVGA-20M-B, GVS 122, WTH 62110, DSEM-4309 տվյալները հանդիսանում են ոչ թե ապրանքային նշաններ, այլ համապատասխան ապրանքային նշանների կոնկրետ մոդելներ:

Մասնակցի կողմից առաջարկվող PT-VW540, CC-PPVGA-20M-B, GVS 122 ապրանքների համար որպես ապրանքի արտադրողի անվանում նշվել է

համապատասխանաբար «Panasonic», «Gembird» ընկերությունների անվանումները: Միևնույն ժամանակ Խորհուրդն արձանագրում է, որ արտադրողների պաշտոնական կայքէջերում առկա տեղեկատվության համաձայն՝ Մասնակցի կողմից որպես արտադրող նշված «Panasonic» և «Gembird» ընկերությունների անվանումները իրականում հանդիսանում են «Panasonic Corporation» և «Gembird Europe BV»:

Մասնակիցը PT-VW540 (Panasonic) և DSEM-4309 (DIGIS) ապրանքների ծագման երկիր 6.1 հավելվածում մատնանշել է համապատասխանաբար՝ Ճապոնիա և ՌԴ, մինչդեռ նշված ապրանքների վերաբերյալ համացանցի համապատասխան կայքէջերում առկա տեղեկատվության համաձայն՝ PT-VW540 (Panasonic) և DSEM-4309 (DIGIS) ապրանքների ծագման երկիրը հանդիսանում է Չինաստանը (ապրանքի ծագման երկիր է համարվում այն երկիրը, որտեղ դա ամբողջությամբ արտադրվել է կամ վերջին անգամ ենթարկվել է բավարար վերամշակման՝ համաձայն օրենսդրությամբ սահմանված չափանիշների):

Ընթացակարգի հրավերի 6.1 հավելվածով գնման առարկա պրոյեկտորի հավաքածուի մեջ մտնող ուժեղացուցիչ-բաշխիչի համար տեխնիկական բնութագրով նախատեսվել է, որ հաճախականության դիապազոնը պետք է լինի առնվազն 450 Մhg, մինչդեռ Մասնակցի կողմից առաջարկվող Gembird GVS 122 ապրանքի հաճախականության դիապազոնը կազմում է ընդամենը 200 Մhg, որը չի համապատասխանում Ընթացակարգի տեխնիկական բնութագրով պահանջվող չափին:

Դրա հետ մեկտեղ Ընթացակարգի տեխնիկական բնութագրով նախատեսվել է, որ վերը նշված սարքի սնուցումը պետք է իրականացվի USB Y-Cable մալուխի միջոցով, իսկ Մասնակցի կողմից առաջարկվող Gembird GVS 122 սարքի սնուցումը, համաձայն վերջինիս տեխնիկական բնութագրի, իրականացվում է 7V DC 500 mA հոսանքի ադապտերի միջոցով:

Ընթացակարգի հրավերի 6.1 հավելվածով գնման առարկա պրոյեկտորի տեխնիկական բնութագրի 4-րդ կետով նախատեսվել է պրոյեկտորի ***առաստաղի ունիվերսալ կախիչ*** (60-110 սմ), մինչդեռ Մասնակցի կողմից առաջարկվող Wize WTH 62110 կախիչը հանդիսանում է կարճաֆոկուս պրոյեկտորների համար նախատեսված ***պատին ամրացվող ունիվերսալ կախիչ***, որը նույնպես չի համապատասխանում տեխնիկական բնութագրի պահանջին:

Ընթացակարգի տեխնիկական բնութագրով նախատեսվել է պրոյեկտորի երաշխիքային սպասարկման ժամկետի վերաբերյալ պահանջ, որը բացակայում է Մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում:

Միևնույն ժամանակ Ընթացակարգի տեխնիկական բնութագրով նախատեսվել է նաև, որ համակարգը պետք է մատակարարվի և տեղադրվի (ներառյալ տեղադրման համար անհրաժեշտ պարագաները և նյութերը) Վաճառողի ուժերով և նրա միջոցների հաշվին, ինչպես նաև ապրանքները պետք է լինեն չօգտագործված: Խորհուրդն արձանագրում է, որ «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում նշված դրույթները բացակայում են:

Հրավերի ՄԱՍ Ի-ի 8-րդ կետի 8.19-րդ ենթակետի 2-րդ պարբերության համաձայն՝ հրավերի 1-ին մասի 8.16 կետով նախատեսված փաստաթղթերը գնահատելու նպատակով հրավիրվող նիստում առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում ծանուցմանը պարտադիր կցվում է հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը, որում պարտադիր և մանրամասն պետք է նկարագրված լինեն ապրանքի ամբողջական նկարագրում սույն հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունները:

Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Այսպիսով հաշվի առնելով վերոգրյալը, Խորհուրդն արձանագրում է, որ «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ի կողմից Կարգի 47-րդ կետով սահմանված կարգով շտկված և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին կրկին ներկայացված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված մի շարք պարամետրերին և պահանջներին:

Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը սահմանում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Նման պայմաններում Խորհուրդը գտնում է, որ «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ի հայտը գնահատելով բավարար և վերջինիս ճանաչելով ընտրված մասնակից, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է ոչ իրավաչափ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ մասի 1-ին պարբերության համաձայն՝ հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:

Խորհուրդը արձանագրում է, որ «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման նիստը տեղի է ունեցել 31.10.2017թ. ժամը 12:30-ին, մինչդեռ վերջինիս արձանագրությունը www.procurement.am էլեկտրոնային հասցեով գործող տեղեկագրում հրապարակվել է միայն 14.11.2017թ.: Հետևաբար Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը չի պահպանել նաև Օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ մասի պահանջները:

Այսպիսով հաշվի առնելով վերոգրյալը, Խորհուրդը գտնում է, որ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման, քանի որ «Իասիտելեկոմ» ՍՊԸ-ի հայտը, վերը նշված հիմնավորումներով, չի համապատասխանում «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/4» ծածկագրով հրավերի պահանջներին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 06.11.2017թ. ներկայացված բողոքը բավարարել և դադարեցնել «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացված

«Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ին ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ